



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

25 հունվարի 2018թ. թիվ 7

ԼՈՒՈՒՄԱՐԶՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ
ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով՝

Կարգադրում եմ.

1. Լոռու մարզում 2017-2018 ուստարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել կազմկոմիտե՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Ստեղծել մարզային առարկայական հանձնաժողովներ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ Ա.Մատինյանի վրա:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

2018թ. հունվարի 25
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ